ԱՇԽԱՐՀԻ ԿՈՂՄԻՑ ԽԱԲՎԱԾ ԵԿԵՂԵՑԻ

...Հիսուս Քրիստոսին՝ Իր Որդուն, և ամեն բան շնորհեց մեզ Քրիստոսում: Մենք շնորհակալ ենք Քեզանից, Տե՛ր, այս առանձնաշնորհումների համար, որ շնորհել ես մեզ այս մեծ գերագույն Ձոհի միջոցով, որ Հիսուսը մատուցեց մեզ համար Գողգոթայում, որը հաշտեցրեց մեզ և վերադարձրեց դեպի շնորհն ու Քեզ հետ հաղորդակցությանը, որ այս մխիթարությունն ունենանք՝ իմանալով, որ գրված է. «Եթե Իմ մեջ մնաք, Իմ Խոսքերն էլ ձեր մեջ մնան, ինչ էլ, որ կամենաք, կխնդրեք, ու կլինի ձեզ»: Հիմա, մենք շնորհակալ ենք դրա համար, և խնդրում ենք, որ հավատք տաս մեզ հավաալու դրան ողջ էությամբ:

2 Թող մի կողմ դնենք հիմա, Տե՛ր, օրվա հոգսերը՝ այս կյանքի ամեն հոգս՝ պահակից մինչև հովիվ, որ հիմա մեր մտքերում ոչինչ չլինի, այլ սպասենք, ակնածանքով, լսելով Սուրբ Հոգուն, որ խոսի մեզ հետ, որ կարողանանք ինչ–որ մի բարի բան ավարտին հացսնել, որ իմանանք ավելին Քո մասին մեր միասին հավաքվելով: Որովհետև, Տե՛ր, ճշմարտապես մենք դրա համար ենք եկել այս շոգ օրին: Խոսի՛ր մեզ հետ Քո կենդանի Խոսքի միջոցով, և թող կենդանի Խոսքն ապրի և բնակվի մեր մեջ, որ չկերպավորվենք այս աշխարհի կերպարանքով, այլ նորոգվենք մեր հոգու նորոգությամբ՝ Աստծո Որդուն կերպարանքից լինելու համար: Ո՛հ, մեր սրտերը ցնցում են, երբ մտածում ենք, և մեր անձերը լցվում են ուրախությամբ՝ իմանալով, որ կարող ենք Աստծո որդիներ և դուստրեր կոչվել: Մենք կանգնած ենք Նրա երկրորդ Գալստյան շեմին, և բոլոր ազգերն ու թագավորությունները դողում են մեր ոտքերի տակ, աշխարհիկ ամեն բան վերանալու է, բայց իմանալով, որ մի օր Նա կգա և մեզ կտանի Թագավորության մեջ, որը վերջ չի ունենա, կամ, այն երբեք չի սասանվի: Մի մտածե՞ք, մենք այդ Թագավորության հպատակներն ենք: Ո՛վ Աստված, թլփատի՛ր Սուրբ Հոգով մեր սրտերն ու ականջները այսօր ավազանի ջրով՝ Խոսքի մաքրման միջոցով: Որովհետև մենք այդ խնդրում ենք Նրա Անունով

և Նրա փառքի համար: Ամեն:

3 Այս առավոտ ես կուզեի դիտարկել այս թեման: Որովհետև ես պատրաստվում էի մի փոքր այլ բանի մասին խոսել, եթե բժշկության ծառայություն լիներ, բայց մենք հայտարարեցինք, որ աղոթքի թերթիկները կբաժանվեն ժամը ութից մինչև ութն անց երեսուն կամ ինը: Եվ ես ուղղակի...Մի քանի րոպե առաջ Բիլլին եկավ և ասաց, որ այստեղ գրեթե ոչ ոք չկար, դրա համար նա աղոթքի թերթիկներ չի բաժանել: Ուստի մենք...Եկեղեցու շտկման համար ես մտածեցի ընտրել այս թեման: Եվ ես ուզում եմ խոսել այս թեմայով՝ *«Աշխարհի կողմից խաբված եկեղեցի»:* Այժմ կուզենայի կարդալ Դատավորների գրքից, 16–րդ գլուխ, 10–րդ համարից սկսած:

> *Դալիլան ասաց Սամփսոնին. «Ահա ինձ ծաղրեցիր ու սուտ խոսեցիր, հիմա խնդրում եմ, հայտնի՛ր ինձ, թե ինչով կկապվես»:*
>
> *Նա էլ ասաց. «Եթե* դու *ինձ նոր ու չգործածված պարաններով լավ կապես, կտկարանամ, կդառնամ մյուս մարդկանց նման»:*
>
> *Եվ Դալիլան նոր պարաններ վերցրեց և դրանցով նրան կապեց ու ասաց նրան. «Սամփսո՛ն, փղշտացիները գալիս են քո վրա»: (Դարանակալած մարդիկ նստած էին ներքին սենյակում): Սամփսոնը դրանք իր թևերից* դերձանների *պես պոկեց:*
>
> *Դալիլան Սամփսոնին ասաց. «Մինչև հիմա ինձ ծաղրեցիր ու սուտ խոսեցիր: Ասա՛ ինձ, թե ինչով կկապվես»: Ու նա ասաց. «Եթե գլխիցս յոթ գիսակները ջուլիակի ոստայնին հյուսես»:*
>
> *Նա այդպես արեց ու հաստոցի* ցցերով *ամրացրեց ու նրան ասաց. «Սամփսո՛ն, փղշտացիները գալիս են քո վրա»: Նա քնից* արթնացավ ու ոստայների ցիցերն *ու ոստայնը հաստոցից դուրս քաշեց:*
>
> *Այն ժամանակ Դալիլան նրան ասաց. «Ինչպե՞ս կարող ես ասել, թե՝ «Սիրում եմ քեզ», երբ սիրտդ ինձ հետ չէ: Երեք անգամ է, որ ծաղրում ես ինձ ու...ասում, թե քո մեծ ուժն ինչի՞ց է. Ու չես ասում, թե քո մեծ ուժն ինչի՞ց է»:*

Ու քանի որ ամեն օր իր խոսքերով ձանձրացնում էր ու ճնշում էր նրան այն աստիճան, որ սիրտը մահու չափ նեղացավ,

և իր սրտում ինչ որ կար, պատմեց նրան ու ասաց. «Իմ գլխին ածելի չի դիպել, քանի որ իմ մոր արգանդից ես Աստծո ուխտավոր եմ: Եթե ածիլվեմ, իմ ուժն ինձնից կգնա, ու մյուս մարդկանց կնմանվեմ»:

Երբ Դալիլան տեսավ, որ նա իր սրտում եղածն իրեն պատմեց, կանչել տվեց իշխաններին ու ասաց. «Այս անգամ եկե՛ք, քանի որ նա իր սրտում եղածն ինձ հայտնեց»: Եվ իշխանները եկան նրա մոտ ու փողը կամ *արծաթն էլ իրենց հետ բերեցին:*

Դալիլան նրան իր ծնկների վրա քնեցրեց, մի մարդ կանչեց և նրա գլխի յոթ բաժին մազերը սափրել տվեց ու սկսում է *նեղել նրան, և նրա ուժը նրանից գնացել էր:*

Կինն ասաց. «Ո՛վ Սամփսոն, փղշտացիները գալիս են քո վրա»: Նա քնից արթնանալով ասաց. «Վեր կենամ ու նախորդ անգամների պես թափ տամ»: Նա չգիտեր, որ ՏԵՐՆ իրենից հեռացել է:

4 Այժմ կուզեի կարդալ որպես տեքստ այս թեմայի համար, գտնվում է Հայտնության գրքում, 2–րդ գլուխ, 21–րդ համարից սկսած մինչև 23–ը:

Եվ Ես նրան ժամանակ տվեցի, որ նա ապաշխարի իր պոռնկությունների *համար, բայց չապաշխարեց:*

Ահա Ես նրան անկողին եմ գցելու և նրա հետ շնացողներին՝ մեծ նեղությունների *մեջ, եթե իրենց կատարածների համար չապաշխարեն:*

Եվ նրա զավակներին պիտի մահով սպանեմ, ու բոլոր եկեղեցիները պետք է իմանան, թե Ես Նա եմ, որ նրանց երիկամներն ու սրտերն եմ քննում և ձեզնից յուրաքանչյուրին հատուցելու եմ ձեր գործերի համեմատ:

Թող Տերն Իր օրհնությունն ավելացնի Խոսքի ընթերցմանը:

5 Սամփսոնը նույնքան հզոր, որքան եկեղեցին, ճիշտ սկսեց: Նա ճիշտ ուղղությամբ սկսեց: Նա սկսեց և քաջարի հզոր մարդ կոչվեց: Նա սկսեց Տիրոջը ծառայելով, Նրա

Խոսքերը պահելով և Նրա պատվիրանները կատարելով: Եվ դա որոշ չափով նման էր եկեղեցուն: Նա սկսեց, ինչպես մենք կասեինք աշխարհիկ արտահատությամբ, ճիշտ ոտքից: Սկսեց պահել Տիրոջ պատվիրանները: Եվ քանի դեռ Սամփսոնը հետևում էր Տիրոջը, Տերը օգտագործում էր նրան:

6 Որովհետև Աստված ցանկացածին պահպանում և ցանկացածին օգտագործում է, ով կհետևի Նրան, որովհետև դա Աստծո գործն է: Բայց երբ մենք Աստծո բաներից մի կողմ ենք շրջվում, այդժամ Աստված այլևս չի կարող մեզ օգտագործել: Երբ մենք հաստատուն քայլենք Աստծո պատվիրանների համաձայն, երբ Աստվածաշնչի էջերի մեջ մնանք և գրված Խոսքի համեմատ պաշտենք Նրան՝ պաշտենք Հոգով և Խոսքի Ճշմարտությամբ, այդժամ Աստված ցանկացած անհատին կարող է օգտագործել: Բայց երբ նրանք որոշում են ինչ-որ այլ բանի ուղղությամբ շրջվել, այդժամ Աստված այլևս չի կարող օգտագործել այդ մարդուն:

7 Այսպիսով, Սամփսոնը ներկայացնում է այսօրվա եկեղեցին: Երբ եկեղեցին սկսեց, Աստված կարողանում էր օգտագործել նրան, որովհետև եկեղեցին ջանասիրաբար քայլում էր Տիրոջ պատվիրանների համաձայն, պահում էր Նրա բոլոր դատաստաններն ու կանոնները և կատարում էր Նրա բոլոր պատվիրանները: Եվ Աստված եկեղեցու հետ էր: Սակայն թվում է, թե այդ եկեղեցին թույլ տեղ ուներ:

8 Հիշե՛ք՝ մենք դաշտախնջույքում չենք, այլ պատերազմի դաշտում: Շատերը կարծում են, թե երբ նրանք քրիստոնյա են դառնում, դա է այն ամենը, ինչ անհրաժեշտ է անել, որ դա ընդմիշտ կարգավորում է ամեն բան, քանի որ նրանք քրիստոնյա են ամեն բան հեշտ է լինելու: Երբեք դա ձեր մտքով անց չկացնեք: Որովհետև ես քրիստոնյա եմ դարձել, որ պատերազմեմ, պատերազմեմ հավատի բարի պատերազմը: Ես քրիստոնյա եմ դարձել՝ ճակատային գիծ մտնելու համար: Մենք քրիստոնյա զինվորներ ենք, և մենք պետք է վարժվենք և կրթվենք և իմանանք թշնամու բոլոր հնարքները, որ իմանանք, թե ինչպես ուժեղանանք, իմանանք թե ինչպես պատերազմը պատերազմենք: Եվ մենք դա կարող ենք անել միայն այնպես, ինչպես Սուրբ Հոգին մեզ դա կհայտնի: Մենք չենք կարող ընդունել այն, ինչ որոշակի մի ազգ ասում է մեզ, իրենց որոշակի գաղափարները, երբ գնում ենք

պատերազմելու։ Բայց մենք պետք է մեր սեփական գաղափարներն ունենանք, այն ճանապարհը, որով Սուրբ Հոգին է մեզ ուղղորդելու, և ինչպիսի գաղափարներ է Նա մեզ տալու, որովհետև Նա է մեր քրիստոնեական բանակի Գլխավոր Հրամանատարը։

9 Սամփսոնը ճիշտ էր վարվում, նա մեծ մարդ էր, մինչև չսկսեց, չսկսեց մի տեսակ (մենք դրան կասեինք) թրև գալ, մինչև չսկսեց դուրս գալ իր սեփական տարածքից։ Եկեղեցին էլ էր լավ վազում, և ամեն ինչ կարգին էր, մինչև նրանք չսկսցին դուրս գալ իրենց տարածքից։ Սամփսոնը սկսեց սիրախաղ անել։ Եվ վերջինս սիրախաղ էր անում ոչ թե հրեա, այլ նա սկսեց սիրախաղ անել փղշտացի աղջիկների հետ։

10 Եվ դա փոքր ինչ նման է այն բանին, ինչ եկեղեցին արեց։ Նա երբեք չսկսեց սիրային հարաբերություններ ունենալ իրեների հետ, այլ քարշ եկավ անհավատների հետևից և սկսեց նրանց հետ սիրախաղ անել։ Ահա, թե որտեղ մենք մեր մեծ, ամենամեծ սխալներից մեկը գործեցինք, այն է՝ երբ եկեղեցին սկսեց անել բաներ, որոնք ճիշտ չեն։ Նա սկսեց Սամփսոնի պես «վատ շրջապատ»-ի հետ ընկերություն անել։

11 Քանի դեռ Սամփսոնը Տիրոջ ժողովրդի միջավայրում էր, ամեն ինչ ճիշտ էր անում, բայց երբ սկսեց վատ շրջապատի հետ սիրախաղ անել, խնդիրների մեջ հայտնվեց։

12 Այդպես էլ եկեղեցու հետ է։ Երբ եկեղեցին ջանասիրաբար և ամեն օր հետևում էր Սուրբ Հոգու առաջնորդությանը, Աստված օրհնում էր նրանց, և հրաշքներն ու նշանները հետևում էին եկեղեցուն։ Բայց երբ այն սկսեց «վատ շրջապատ»-ի՝ աշխարհի հետ ընկերություն անել։ Ամենավատ և առաջին բանը, որը նա արեց, սկսեց կազմակերպվել՝ խզելով հաղորդակցությունը հավատացյալների միջև, որովհետև նրանք տեսան, որ ազգերը կազմակերպված են։ Բայց այս փառավոր Ավետարանը նվիրված չէ մի ազգին կամ մի ժողովրդին, այլ այն նվիրված է «ով կամենում է, թող գա»-ին, բոլոր ազգերին, ցեղերին, լեզուներին և մարդկանց։ Աստված երբեք մտադիր չի եղել, որ մենք սահմաններ գծենք։

13 Բայց մարդիկ ցանկացան նման լինել կամ ընդօրինակել, նրանք համեմատում են, որ անեն այնպես, ինչպես աշխարհն է անում, ասում են այն

բաները, որոնք նրանք են ասում, հաջողության են հասնում այնպես, ինչպես նրանք: Մենք երբեք չենք կարող հաջողություն ունենալ՝ անելով որևէ բան, որ աշխարհն է անում: Մենք հաջողության կարող ենք հասնել միայն այն ժամանակ, երբ հետևենք Աստծո կանոններին և Նրա գործելակերպին: Այս աշխարհին ընդօրինակելու միջոցով մենք երբեք հաջողություն չենք կարող ունենալ: Եթե ծխախոտ արտադրող ընկերությունը իր ամենամեծ հաջողությանը հասել է հեռուստատեսության միջոցով, և գարեջրի և վիսկիի ընկերություններն իրենց մեջ հաջողություններին հասել են հեռուստատեսության աջակցության միջոցով, դա նշան չէ, որ եկեղեցին կհասնի իր հաջողությանը հեռուստատեսության միջոցով: Եկեղեցու հաջողությունը Աստծո զորության, Ավետարանի քարոզչության և Հոգու ցուցադրման մեջ է: Մենք չենք կարող դա ասել, որովհետև հեռուստատեսությունն *այս կամ այն բանն է* արել ծխախոտ արտադրող ընկերության և, և այլ ընկերությունների համար: Մենք սուրբգրային ոչ մի համար չունենք, որ փորձենք համեմատվել այդ մարդկանց հետ: Եվ քանի դեռ մենք դա անում ենք, կարող ենք մեծ թվով մարդկանց գրավել, բայց դա այն չէ, ինչ Աստված է մեզ պատվիրել անել: Մենք կարծում ենք, թե միայն նրա համար, որ մենք բոլորս գունագեղ ենք, վեր ենք թռնում, մեծ կազմակերպություններ ենք, գունագեղ բաների կատարման պատճառ ենք հասնիդսանում, դա հաջողություն է: Մենք ամեն օր մեր ոտքի վրա մահանում ենք, հոգևոր իմաստով: Եթե այս առավոտ մենք տաս միլիոն լինեինք, իսկ Սուրբ Հոգին մեզ հետ չլիներ, ապա ավելի լավ է տաս հոգի լինենք բայց Սուրբ Հոգին մեզ հետ լիներ: Մենք չենք կարող համեմատվել աշխարհի հետ:

14 Եվ առաջին բաներից մեկն այն էր՝ եկեղեցին սկսեց իրեն կազմակերպել: Առաջին կազմակերպությունը կաթոլիկ եկեղեցին էր, այնուհետև եկավ լյութերական եկեղեցին: Երբ նրանք կաթոլիկ եկեկեղու կազմակերպության վերածվեցին՝ այն կազմակերպություն դարձնելու համար, մի օր աղաղակ եղավ. «Սամփսո՛ն, փղշտացիները գալիս են քո վրա», և Սանփսոնը պոկեց կաթոլիկ եկեղեցու պարանի հանգույցները, և հայտնվեց Մարտին Լյութերը՝ կազմակերպությունների հետ:

15 Այդ ժամանակ նրանք եկեղեցին ուրիշ պարանով

կապեցին, ինչպես Դալիլան արեց: Եվ նրանք սկսեցին... Աստծու կողմից կանչված այր ունենալու փոխարեն, մի մարդու, ով կանչված էր Սուրբ Հոգուց. գուցե այբուբենը չգիտեին, բայց նրանք ճանաչում էին Քրիստոսին: Հետո եկեղեցին նորաձև դարձավ և սկսեց ընդօրինակել քաղաքական խոսնակներին: Նրանք սկսեցին «դոկտորի աստիճան» շնորհել իրենց քարոզիչներին, բոլորը պետք է աստվածաբանության դոկտոր լինեին: Դա մեկ այլ պարան էր եկեղեցին կապելու համար: Տղամարդիկ մեկնում և ուսանում են, ամեն ճեմարան փորձում է ավելի լավ գիտնական պատրաստել, որպեսզի իրենց եկեղեցիները կարողանան պարծենալ՝ «Մեր հովիվը աստվածաբանության դոկտոր է»: Եվ ի՞նչ արեցին: Մեկը մյուսից ձգտում է ավելի շատ գիտելիքներ ձեռք բերել: Դա Աստծո աչքին ոչ մի նշանակություն չունի:

16 Կաիրք չկա որևէ մի մարդու փորձել վերցնել իր աշխարհիկ գիտելիքները և դրանցով հաճեցնել Աստծուն: Դա Աստծո աչքին պղծություն է: Դուք երբեք աշխարհիկ ձգտումներով և գիտելիքներով չեք հաճեցնի Աստծուն, որովհետև «դա թշնամություն է Աստծո դեմ», ասում է Սուրբ Գիրքը: Չես կարող դա անել:

17 Եվ յուրաքանչյուրը ձգտում է ամեն ինչ իմանալ: Նրանք գիտեն ինչ անել և ինչ բառեր ասել, և դա պարզապես վերածվում է քաղաքական ճառի, Սուրբ Հոգու Պատգամի զորավոր ցուցադրման փոխարեն, որը թափանցում է մարդու սրտի մեջ և բացահայտում է նրա մեղքերը: Նրանք մարզված են քաղաքական ճառերի համար, իսկ մենք դրա կարիքը չունենք: Պողոսն ասում է. «Խոսքը ոչ միայն քարոզվեց մեզ...ավելի ճիշտ՝ Ավետարանը ոչ միայն Խոսքով էր, այլ նաև զորությունով և Սուրբ Հոգու հայտնությունով»: Դա բերեց Ավետարանը՝ ցուցադրելով Սուրբ Հոգու զորությունը: Բայց բոլոր այս մարդիկ գնում են ճեմարաններ և բարձրագույն կրթություն են ստանում, թե ինչպես պետք է կանգնեն բազմության առջև, թե ինչպես պետք է իրենց ներկայացնեն, թե ինչպես պետք է հագնվեն և ինչպես պետք է իրենց պահեն, նրանք քերականական սխալ երբեք չեն անի: Հիմա, այդ ամենը լավ է քաղաքական ճառի համար, բայց մենք մարդու դյութիչ բառերի հետևից չենք գնում: Պողոսն ասում է. «Ավետարանը, որ ես ավետարանում եմ այդպես չի գալիս, այլ Այն գալիս է Սուրբ Հոգու նորոգության և զորության ցուցադրման միջոցով»: Չի գալիս ճիշտ

կազմված ճառից, դա կլիներ ձեր իմաստությունը, այսինքն մարդկային իմաստությանը կվստահեիք: Բայց այն գալիս է հարուցյալ Քրիստոսի զորության ցուցադրումով: Դա է Ավետարանը. «Ճանաչել Նրան՝ Իր հարության զորությամբ»:

18 Յուրաքանչյուրը կարծում է, թե ինքը ուրիշից մի քիչ ավելի խելացի է, յուրաքանչյուր հարանվանութուն: Մեթոդականները կասեն՝ «Մենք ունենք ամենախելացի մարդուն»: Մկրտականները կասեն, Քրիստոսի եկեղեցին և այլն, նրանք բոլորը. «Մենք, մենք ենք ամենախելացիները: Մենք, մեր, մեր մարդիկ...մենք սովորական մարդուն թույլ չենք տալիս գնալ և Ավետարանը քարոզել»: Բայց նրանք ընտրում են նրանց: (Ո՛վ Աստված, ողորմի՛ր): Ընտրում են նրանց: Եթե նրանց ներշնչել են որոշակի ուսմուք, ուրեմն նրանց տեղ կտան եկեղեցում: Աստված ոչ մի կերպ չի կարող հպվել նրան: Ես ուզում եմ, որ ինձ քարոզի մեկը, ով ընտրված է Սուրբ Հոգուց, ում Աստված է վեր հանել, այլ ոչ թե ընտրված է մարդու կամ հարանվանությունների կողմից:

19 Ողջ գիտելիքները: Նրանք ասում են. «Ո՛հ, մենք Դրա մասին ամեն ինչ գիտենք», իսկ նրանցից շատերը Սուրբ Հոգու առաջին այբուբենը չգիտեն: Նրանք մերժում են Դա:

20 Դա ինձ հիշեցնում է տաս տարի առաջ Կալիֆոռնիայում կարդացած փոքրիկ մի գրքի մասին: Ես այն հին գրախանութից էի առել: Հեղինակին չեմ հիշում: Ընդհամենը փոքրիկ տաս ցենտանոց մի գիրք էր, բայց այն լավ իմաստ ուներ, թեև թվում էր կատակերգական և խորամանկ: Բայց ես այնտեղ մի բան գտա, որն ինձ համար հնչում էր որպես Աստծուց: Եվ այդ պատմվածքներից մեկը սկսվում էր այսպես: Մի առավոր, մի մեծ հավանոցներից մեկում փոքրիկ մի աքլոր է լինում, ով կարծում էր, թե ինքը ամեն ինչ գիտի: Այսպիսով, նա բարձրանում է արկղի վրա և իր փոքրիկ կտուցով չորս թե հինգ անգամ հարվածում է դրան, ուղղում է իր փոքրիկ գլուխը և այնպես է ծուղրուղու կանչում, ինչպես երբեք լսաց չեք լինի, որ աքաղաղը կանչի: Եվ մյուսները, նա գրավում է վերջիններիս ուշադրությունը և ասում. «Այս հավանոցի տիկնա՛յք և պարոնա՛յք, ես այս ողջ ատավոտ կուզեյի ձեզ հետ խոսել կրթական մի մեծ ծրագրի մասին, որը մենք հենց նոր ենք կազմել»: Ասաց. «Իմ հետազոտության մեջ շատ գիտելիքներ են

հարկավոր եղել», մինչ նա ուղղում էր փոքրիկ ակնոցները իր կտուցի վրա: Եվ նա ասաց. «Ես որոշել եմ, որ մենք՝ հավերս կարող ենք ինքներս մեզ լավացնել ավելի շատ գիտելիքներով: Ուստի ես կարող եմ ձեզ ասել, թե որտեղ, եթե փորենք և աշխատենք որոշակի անասնագոմում կամ անցքում, մենք կգտնենք որոշակի վիտամին, որը մեզ կոգնի ավելի լավ կանչել և ավելի սիրուն փետուրներ կաճեն: Եվ, ո՛հ, ես կարող եմ ձեզ պատմել, թե մենք ինչպես կարող ենք ինքներս մեզ լավացնել բազմաթիվ տարբեր եղանակներով»:

21 Եվ փոքրիկ ճուտերն իրենց փոքրիկ կարմիր փուփուլներով պարզապես կոթկոթում և ասում էին. «Մի՞թե նա լավիկը չէ»: Եվ նրանք, անշուշտ, հիանում էին նրանով: «Ո՛հ, նա այնպիսի հոյակապ աքլոր է»: Դա ինձ հիշեցնում է այստեղի մի քանի ճեմարանի քարոզիչների մասին. «Այնպիսի՜ հոյակապ եղբայր է: Մենք կարիք չունենք թրև գանք մյուս հավերի հետ, մենք բոլորս պիտի նրա հետ գնանք»:

22 Եվ մինչ այդ փոքրիկ աքլորը կավարտեր իր խոսքը, այնտեղ ուրիշ հավ է լինում, որն այնքան էլ փայլուն փետուրներ չուներ, հավանոցի բակից վազելով գալիս է և ասում. «Տղանե՛ր, մի րոպե: Ես հենց նոր ռադիոյով լսեցի վերջին նորությունները: Հավերի գինը մեկ ֆունտի համար չորս ցենտով թանկացել է, վաղը մեզ բոլորիս մորթելու են: Ի՞նչ օգուտ կունենաք ձեր գիտելիքներից»:

23 Եղբա՛յր, ողջ գիտելիքները, որ մենք կարող ենք կուտակել, ի՞նչ օգուտ դրանից: Մենք ընդամենը վեց ֆուտ հող ենք: Մենք բոլորս դանդաղ և վարկյաններով մահանում ենք: Մեր գիտելիքները ոչ մի նշանակություն չունեն: Մենք ուզում ենք Նրան ճանաչել: Բայց նրանք ձգտում են դրան:

24 Ինչպես մի անգամ հիշեցրի փոքրիկ դեղձանիկի մասին, նա կարծում էր, թե գիտեր ամեն ինչ, և այնքան գիտեր, որ կարող էր մյուս բոլոր դեղձանիկներին պատմել մարդկային էակների մասին: Եվ այսպես, նա թռավ իր վանդակի մեջ և սկսեց պատմել մարդու մասին, որքանով որ գիտեր նրանց մասին: Հանկարծ Պուրդույից մի դասախոս մոտենում և սկսում է նրբաճաշակ բառեր ասել նրան, դեղձանիկը թփթփացնում է աչքերը, շրջում է գլուխը և...Հիմա, նա աչքեր ուներ, կարողանում էր տեսնել դասախոսին: Ականջներ ուներ, կարողանում էր լսել նրան: Բայց, անշուշտ, նա չգիտեր, թե այդ

դատախոսը ինչի մասին էր խոսում: Ինչո՞ւ: Որովհետև դեղձանիկի ուղեղ ուներ: Նա ընդամենը թռչնի ուղեղ ունի: Դա է այն ամենը, ինչ ունի նա: Նա մարդկային ուղեղ չունի, ուստի չի կարող մտածել մարդու նման:

25 Ոչ էլ մարդ արարածը կարող է Աստծո պես մտածել: Դու մարդ արարած ես, և աշխարհի ողջ գիտելիքները ոչ այն ինչ է, քան դեղձանիկի ուղեղ: Այն ամենը, ինչ դու անում ես, պարզապես դրանով վնասում ես քեզ: Դու պիտի Քրիստոսի միտքն ունենաս:

26 Պատճառը, թե մարդիկ ինչու են գնում և միանում կազմակերպություններին, և նոր ծնունդը փոխարինում ձեռքսեղմումով, այս է՝, նրանք փորձում են նոր ծննդի կողքով անցնել: Նրանք նոր ծնունդ չեն ուզում: Նրանք, նրանք գիտեն, որ մենք դա սովորեցնում ենք Սուրբ Գրքի համաձայն, դրա համար ուզում են փոխարինել դա ինչ-որ բանով: Հոգեգալստականներն էլ նույնքան վատն են, որովհետև փորձում են փոխարինել ինչ–որ բանով: Նրանք դա ուզում են դասական ձևով: Դա պարզապես պետք է այնքան դասական լինի. «Մենք ձեռքերը կսեղմենք և կմիանանք եկեղեցուն, և կսրսկեն ջրով կամ կմկրտեն», կամ էլի ինչ–որ բան: Նրանք վախենում են նոր ծննդից: Ես երբեմն մտածում եմ, որ Բրանհամի խորանը վախենում է դրանից:

27 Հիմա, մենք բոլորս գիտենք, որ ծնունդը, կարևոր չէ, թե որտեղ է դա լինում, դա խառնաշփոթ է: Արդյոք երեխան ծնվում է կույտի կամ կոշտ հատակի վրա, թե զարդարված հիվանդասենյակում, ամեն դեպքում դա խառնաշփոթ է: Հորթի ծնունդը, ցանկացած այլ մեկի ծնունդը, խառնաշփոթ է:

28 Եվ նոր ծնունդը ոչ պակաս, քան խառնաշփոթ է: Սակայն մարդիկ այնքան խստաբարո են. «Մենք կգնանք այնտեղ, որտեղ նրանք ձեռքը սեղմում են: Մենք կգնանք այնտեղ, ուր չեն աղաղակում, լաց լինում, չեն զարկում խորանին և հեկեկում»: Դուք չափազանց մարդկային եք ուզում լինել: Այն, ինչ մեզ պետք է, դա ծնունդն է, մահը, որ Կյանք է բերում:

29 Սերմը՝ հին կարտոֆիլը, կարտոֆիլի սերմը, վերցրեք այդ կարտոֆիլը և դրեք հողի մեջ: Որպեսզի նոր կարտոֆիլ ունենաք, այդ հին կարտոֆիլը պետք է փտի: Ցորենի հատիկը նոր կյանք չի կարող արտադրել, մինչև այն չփտի:

30 Թե տղամարդ, թե կին նոր կյանք երբեք չեն կարող ունենալ, մինչև իրենց ինտելեկտները և իրենց սեփական «ես»-ը չփտի, չմեռնի, չմեռնի խորանի մոտ և աղաղակի այս ողջ խառնաշփոթության մեջ այն աստիճան, որ ձեր օսլայած օձիգը կորցնի իր խստաբարոյությունը և վերստին ծնվեք Սուրբ Հոգուց: Ինձ չի հետաքրքրում, թե արդյոք դուք աղաղակում, խոսում եք լեզուներով, ցատկում, թե դրփում եք անգլուխ հավի նման, քո մեջ նոր Կյանք է ծնվում: Բայց մենք դա փոխարինել ենք ինչ-որ բանով, մենք դասական ձևն ենք ուզում, անշուշտ:

31 Վերջերս՝ հինգշաբթի օրը ես ու կինս խանութ էինք գնում: Ես մտադիր չեմ այս թեմաի շատ երկարացնել: Բայց մինչ մենք իջնում էինք փողոցով, ես ուղղալի գլուխս մի կողմից մյուս կողմ էի շրջում՝ մերկ կանայք են: Երբ ես կույր էի, խոսք էի տվել Աստծուն, որ եթե Նա իմ աչքերը բժշկի, ճիշտ բանին կնայեմ: Եվ մեքենայիս մեջ փոքրիկ մի խաչ է կախված: Երբ ես այդպիսի բան եմ տեսնում, նայում եմ խաչին և ասում եմ. «Ո՛վ Աստված, դա է իմ Ապաստանը», երբ նայում եմ այդ խաչին:

32 Ես տեսնում էի այդ կանանց: Մեդան ասաց. «Մենք այսօր չտեսանք մի կին, որ կիսաշրջազգեստով լիներ»: Եվ նա ասաց. «Բի՛լլ, ապա նայի՛ր այդ կնոջն այնտեղ այդ փոքրիկ լաթերով մարմնի վերին մասում,— և ասաց,— դու ուզո՞ւմ ես ասել, որ այդ կինը չգիտի, որ դա սխալ է: — Ասաց,— եթե նա չգիտի, որ դա սխալ է, ուրեմն նրա խելքը գլխին չէ»:

33 Ես ասացի. «Մի րոպե, սիրելիս: Նա ամերիկուհի է, նա անում է այնպես, ինչպես ամերիկացիներն են անում»: Ես ասացի. «Սիրելի՛ս, ես վերջերս Ֆինլանդիայում էի»:

34 Եվ ես այնտեղ առարկեցի մի մարդու, ով ինձ իմ տեղը դրեց, բժիշկ Մանինեն էր: Մենք առողջական բաղնիք էինք գնում, որը «սաունա» է կոչվում, նրանք քեզ ներս են տանում և տաք ջուրը լցնում են, ավելի ճիշտ, ջուրը լցնում են տաք քարերի վրա, և դա ուղղակի քրթնեցնում է քեզ: Այնուհետև ստիպում են, որ սառը ջրի մեջ ցատկես, իսկ հետո դուրս գաս: Հետո քեզ տանում են մի սենյակ, որտեղ բուժքույրեր են՝ կանայք, ովքեր տրորում են այդ տղամարդկանց (մերկ), և նորից լողավազան են ուղղարկում: Ես այնտեղ չէի գնա: Եվ ես ասացի. «Դոկտոր Մանինեն, դա սխալ է»:

35 Նա ասաց. «Լավ, պատվելի Բրանհամ, դա սխալ է: Այդ դեպքում ի՞նչ կասես ամերիկացի ձեր բժիշկների մասին,

ովքեր մերկացնում և պարկեցնում են կնոջը սեղանի վրա և զննում նրա սեռական–սեռական օրգանները: Ի՞նչ կասես հիվանդանոցի ձեր բուժքույրերի մասին»:

36 Ես ասացի. «Ներեցե՛ք, եղբայր Մանինեն, Մանինեն, դուք իրավացի եք»:

37 Ի՞նչ է սա: Սովորույթներ: Երբ ես Փարիզում էի, հավատս չէր գալիս, որ թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց համար զուգարանը նույն է: Ես դա չէի կարողանում հասկանալ, որ զուգարանները փողոցի անկյունում և՛ տղամարդկանց, և՛ կանանց համար էին: Ես չէի կարողանում հավատալ, որ երբ կանայք գնում են լողափ՝ լողանալու, տղան և իր սիրելին, հանդերձարաններ չունեն, նրանք պարզապես մինչև վերջ հանվում են, այնուհետև մեջքով շրջվում, հագնում են փոքրիկ լաթերը և գնում են լողանալու, բայց դա այդպես է: Նրանք ոչ մի ուշադրություն չեն դարձնում դրան: Դա Ֆրանսիայի սովորույթն է:

38 Աֆրիկայում, տղամարդիկ և կանայք, երիտասարդներն ու ծերերը ընդանրապես առանց հագուստի են քայլում տափաստանների միջով: Զուգարանը չգիտեն, թե ինչ բան է, կամ նման բաներ, և երբեք իրար տեսադաշտից չեն հեռանում: Բայց նրանք տարբերությունը չգիտեն: Նրանք չգիտեն տարբերությունը: Բայց դա ազգերի սովորույթներն են:

39 Բայց ես ասացի. «Սիրելի՛ս, մենք տարբեր ենք, մենք ուրիշ Ազգից ենք: Մենք այստեղ պանդուխտներ և օտարականներ ենք, դրա համար է, որ այդ բաններն այսպես սխալ են թվում: Որովհետև Աստվածաշունչն ասում է. «Նրանք, ովքեր նման բան դավանում՝ հայտարարում են, ցույց են տալիս, որ նրանք պանդուխտներ և օտարականներ են, նրանք որոնում են քաղաքը, որ պիտի գա»:

40 Տղամարդ, թե կին Իտալիայում, Ֆրանսիայում, Աֆրիկայում, ցանկացած այլ ազգի մեջ, ով երբևէ վերստին ծնվել է Սուրբ Հոգուց, նման բաներ չի անում: Նրանք այդ հագուստները չեն հագնի: Նրանք այդպես չեն վարվի, որովհետև ուրիշ Ազգից են, Որի Կառավարիչն ու Արարիչն Աստված է: Մենք Երկնքից ենք: Ձեր մեջ եղող հոգին մոտիվացնում է ձեր կյանքը: Եթե դու ամերիկացի ես, կանես այնպես, ինչպես ամերիկացիներն են անում: Եթե դու ֆրանսիացի ես, կանես այնպես, ինչպես ֆրանսիացիներն են անում, և քննադատելու ես

ուրիշներին: Բայց եթե դու Աստծուծ ես, կանես այնպես, ինչպես Երկնքում են անում, որովհետև քո Հոգին Վերևից է գալիս և Նա հսկում է քեզ:

41 Եվս մի բանի վրա ուշադրություն դարձրեք: Սուրբ Գրքում նրանք, ովքեր որոնում էին այդ Քաղաքը, այլ կերպ էին վարվում: Նրանք դավանում էին, որ պանդուխտներ և օտարականներ են: Բայց Կայենի կողմը՝ նրանք փախստականներ և ուխտագանցներ դարձան: Բայց քրիստոնյաները պանդուխտներ և օտարականներ էին: Փախստականը տուն չունի, ուխտագանցը սարսափելի անձնավրություն է: Բայց պանդուխտը ռեալ մի բան է, ռեալ երկրից, այլ Ազգից է, փորձում է գտնել իր ճանապարհը դեպի Տուն, դավանելով իր կյանքով, որ ունի մի բան, որը ցույց է տալիս, որ նա ուրիշ Երկրից է: Ահա, թե ինչում է խնդիրը:

42 Բայց և այնպես, այն մարդիկ, ովքեր այդպես են անում, այն մարդիկ, ովքեր հագնում են այդ բաները, թույլ տվեք ձեզ ասել: Հարավային Աֆրիկայում երբ ես տեսա երեսուն հազար վայրի հեթանոսներ, մերկ, հետամնաց բնիկներ: Տասնվեց, տասնութ, քսան տարեկան տկլոր աղջիկներ և տղաներ կանգնած էին այնտեղ՝ ցեխից աղտոտված դեմքերով, ներկված, քթի մեջ ոսկորներ, փայտի կտորներ կախված իրենց ականջներից, և խաչում էին մարդկային կամ այլ ոսկորներ իրենց մազերի մեջ, կենդանիների ատամները կախված են նրանց վրա, մերկ այնպես, ինչպես աշխահ են եկել և չգիտեին այդ մասին: Բայց երբ նրանք ընդունեցին Քրիստոսին, և երեսնիվայր ընկան, և ընդունեցին Սուրբ Հոգին, վեր կացան և ծալեցին իրենց թևերը՝ ծածկելու համար մարմինը, երբ դուրս էին գալիս, որ հագուստ գտնեն հագնվելու համար: Ինչո՞ւ: Նրանք պանդուխտներ ու օտարականներ դարձան այս աշխարհում: Ալելո՛ւիա: Նրանք հեռու էին Նրանից: Այո՛, պարո՛ն:

43 Ո՛հ, այո՛, իսկ այս մարդիկ իրենց քրիստոնյա են անվանում: Նրանք պատկանում են եկեղեցիներին: Նրանք հեռանում և ասում են. «Մենք մեթոդական ենք, մենք մկրտական ենք, մենք հոգեգալստական ենք, մենք յոթերորդ օրվա Ադվենտիստներ ենք: Մենք *այս ենք, այն ենք* և *այլ ենք»:* Դա դրա հետ ոչ մի կապ չունի: Քո հոգին՝ կյանքը, որ քեզանում է, մոտիվացնում և ասում է, թո ով ես դու: Հիսուսն ասաց. «Իրենց պտղից կճանաչեք նրանց»:

44 Եկեղեցին դարձել է Իսրայելի նման, ինչպես սկզբում: Նրանք տեսան, որ բոլոր հեթանոս ազգերը թագավոր ունեն: Աստված էր նրանց Թագավորը: Ու երբ նրանք տեսան, որ հեթանոս ազգերը թագավոր ունեն, ցանկացան նրանց պես վարվել, և իրենք իրենց թագավոր ձեռք բերեցին: Եվ երբ նրանք դա արեցին, խնդիրների մեջ հայտնվեցին: Դա սկսեց կամաց-կամաց ներս սողոսկել: Աշխարհը սկսեց կամաց-կամաց սողոսկել նրանց մեջ: Վերջապես ավարտվեց Աքաաբով: Ամեն մի թագավորը մի քիչ ավելի էր մոտենում դրան, մի քիչ ավելի էր մոտենում, և ի վերջո նրաց միջից կյանքը ճզմելով քամեց: Եվ նրանք գնացին այնտեղ: Եվ երբ իսկական Թագավորը եկավ, նրանք Նրան չճանաչեցին:

45 Այդ նույն բանը արեց եկեղեցին: Նա փոխառում արեց: Ահա, թե որտեղ եք դուք: Նա փոխառեց քաղաքականությունը, կրթությունը, փոխառեց կազմակերպությունները, հասարակությունը, մեծ եկեղեցիները, գոռոզ քարոզիչներին: Եվ երբ իսկական Թագավորը գալիս է, նրանք Նրան չեն ճանաչում և խաչում են Սուրբ Հոգին, այսինքն՝ իրենց Թագավորին: Նրանք Նրան չեն ճանաչում, բայց ծիծաղում և ծաղրում են Նրան: Ինչպես հրեաները վարվեցին իրենց Մեսիայի հետ, նույն ձևով էլ եկեղեցին է վարվում նրանց Մեսիայի հետ: Նրանք չգիտեն այդ մասին: Նրանք չունեն հոգևոր խորաթափանցություն, որովհետև նրանք այնքան փաստաթղթավորված են իրենց աչքերով և այն, ինչ նրանք տեսնում են՝ մեծ շենքերն են, փորձում են համեմատվել աշխարհի հետ: Մեզ երբեք չեն կանչել, չեն հորդորվել, որ համեմատվենք աշխարհի հետ: Մեզ հորդորել են, որ մեզ խոնարհեցնենք:

46 Միայն մի մեծամասնություն կա՝ Աստծո մեջ: Իսկ ասյօր ավետարանիչների շրջանում, բշկության ոլորտում այնպիսի մրցակցություն է, մրցակիցներ են: Մեկն ասում է. «Դե, օրհնյա՜լ լինի Աստված, ես հազարավորներ ունեմ: Ես ավելի մեծ հավաքույթ ունեմ, քան դուք»: Ի՞նչ տարբերություն: Մեկ, թե մի միլիոն ունենք, ի՞նչ տարբերություն: Արդյո՞ք մենք հավատարիմ ենք Աստծուն: Արդյո՞ք մենք հավատարիմ ենք Իր Խոսքին: Արդյո՞ք մենք Սուրբ Հոգու փորձության տակ ենք: Արդյո՞ք սա ճշմարտություն է: Դա է կարևորը:

47 Բայց մենք փոխզիջման ենք գնում Սուրբ Գրքի հետ: Մեր հոգեգալստականներից շատերը փոխզիջման են

գնում այս Աստվածաշնչի հիմնական Ուսմունքների հետ: Կա...Ես չեմ ուզում զգացմունքները վիրավորել: Ես իմ սեփական եկեղեցում եմ, և ես զգում եմ, որ իմ եկեղեցում ես, ես կարող եմ անել դա, որովհետև ես Ավետարանն եմ քարոզում: Սակայն տասնյակ հազարավոր հոգեգալստական քարոզիչներ կան, ովքեր գիտեն, որ Աստվածաշնչում այդպիսի բան չկա, ինչպես մկտությունը «Հոր, Որդու և Սուրբ Հոգու» անունով: Ես մարտահրավեր եմ նետում արքեպիսկոպոսին կամ ցանկացած մեկին, որ ցույց տա ինձ, թե որտեղ է որևէ մեկը երբևէ մկրտվել «Հոր, Որդու և Սուրբ Հոգու» անունով: Բայց նրանք փոխզիջման են գնում, որովհետև կազմակերպություններն են արել այսպես: Նոր Կտակարանում չկա մեկը, և երեք հարյուր տարի դրանից հետո էլ պատմության մեջ, որ մկրտված լինի այլ կերպ, եթե ոչ Հիսուս Քրիստոսի Անունով: Ի՞նչ է սա: Կազմակերպություն: Նա արեց դա: Փոխզիջում:

48 Իսկ այսօր նրանք հեռացրել են փողոցներից փողոցային ողջ աշխատողներին: Նրանք եկեղեցուց հեռացրել են դափերը: Նրանք եկեղեցուց հեռացրել են ողջ փառքը և ճեմարանային քարոզչություն են անում, փոքրիկ կատարով ծեր աքլորի քարոզչություն, հասարակության մեջ բոլորը փայլում են, նրանց կանայք կարճատաբատ են հագնում և հագուստներ, որոնք ընգձում են իրենց, իսկ տղամարդիկ սիգարետներ են ծխում, մոլախաղեր են խաղում և անպարկեշտ կատակներ են պատմում: Դա խայտառակություն է Աստծո աչքին: Գիտեմ, որ դա կոպիտ է, բայց ժամանակն է, որ ինչ–որ մեկը մի բան ասի: Փողզիջման են գնում, հանձնվում են, վարվում են աշխարհի նման:

49 Ինձ չի հետաքրքրում, թե ես մենակ պիտի կանգնեմ, առանց ոչ մեկի, բայց միայն Աստծո հետ, ես կքարոզեմ Աստծվածային Սուրբ Գրքի Ճշմարտությունը և կկանգնեմ Դրա համար: Նույնիսկ եթե մեռնեմ, միևնույնն է, կանգնելու եմ Ճշմարտության համար: Անկասկած: Մենք Ճշմարտությունն եք ուզում: Ես համապատասխանելու եմ ոչ թե եկեղեցու պահանջներին, այլ ես ուզում եմ Աստծո Խոսքին համապատասխան լինել:

50 Բայց Դալիլան, նկատեցի՞ք: Նա գիտեր, որ Սամփսոնն ուժ ուներ: Սակայն նա չգիտեր, թե այդ ուժն ինչից էր: Նա չէր կարող ասել, թե դա ինչ ուժ էր, բայց վերջինս մեծ ուժի տեր էր, և նա ուզում էր գտնել այդ: Եվ մինչ Դալիլան...նա

շարունակում էր հմայել Սամփսոնին իր գեղեցկությամբ: Ո՛հ, նա շատ գայթակղիչ էր հագնվում: Այսօրվա որոշ դերահասների նման քայլում էր նրա առաջ և քմծիծաղում էր և, և այլն, և ուզում էր ներկայացնել իրեն որպես մեկ ուրիշը, մերկապար, փորձում էր սիրաշահել Սամփսոնին:

51 Դա նույն բանն է, ինչ աշխարհն արեց եկեղեցու հետ: Որտե՞ղ է հիմա ձեր մեծ Ուժը:

52 «Դե, եթե կազմակերպենք, դա կկոտրի Ուժը»: Կաթոլիկ եկեղեցին դա արեց:

53 «Բայց Սամփսո՛ն, փղշտացիները գալիս են քո վրա»: Եվ դուրս եկավ Լյութերը:

54 Հետո նրանք նորից կազմակերպեցին: «Եթե ինձ ուրիշ պարանով կապես, դա կպահի ինձ»: Նրանք այդպես էլ արեցին:

55 «Սամփսո՛ն, փղշտացիները գալիս են քո վրա»: Ի՞նչ կատարվեց: Դուրս եկավ Ուեսլեյը և պոկեց այդ պարանները:

56 «Դու այսքան ժամանակ խաբել ես ինձ: Մի՞թե չգիտես, որ ես սիրում եմ քեզ, Սամփսո՛ն: Լավ, պատմի՛ր ինձ քո սրտում եղած ճշմարտությունը»:

«Լավ, կապի՛ր ինձ ուրիշ պարանով»:

57 «Շատ լավ, մենք հիմա կանենք դա»: Ի՞նչ է դա: Դա հարանվանական պարանն է:

58 «Թույլ տվեք ինձ ազատ լինել, ցանկացած հարանվանությունից: Այդ դեպքում ասում եմ ձեզ, ես դա կկոտրեմ»: Այսպիսով՝ դուրս եկան հոգեգալստականները: Ո՞ւր է ձեր Ուժը:

«Փղշտացիները գալիս են քո վրա»: Եվ նա դարձյալ պոկեց պարանները:

59 Բայց հիմա ի՞նչ կատարվեց: Դա հասավ հոգեգալստականներին, իրենց հովիվներն աստվածաբանության մեծ դոկտորներ են, ինչ–որ մի մեծ այր: Նրանք նույնքան դպրոցական և ծիսական են դարձել, որքան մեթոդականները կամ մկրտականները, կամ նրանցից ցանկացած մեկը: Մտի եկեղեցի, «ամեն» էլ չես լսի, պարզապես նույնքան սառն են, ինչպես Հյուսիսային բևեռի էսկիմոսները: Սա՛ռը: Անտարբե՛ր: «Իսկ հիմա Սամփսո՛ն, փղշտացիները գալիս են քո վրա»:

60 Ամերիկա՛, փղշտացիները գալիս ես քո վրա: Որտե՞ղ է հոգու այդ միաբանությունը: Ո՞ւր է

հոգեգալստականների միաբանությունը: Աստծո Ասամբլեաները, և Միացյալները, և Աստծո եկեղեցին, և *այս, այն, մյուսը,* յուրաքանչյուրը տարբեր «իզմեր»-ով է, մեկը *այս,* իսկ մյուսը *այն* «իզմ»-ով: Մենք այնքան են բաժանվել, որ չես կարող մտնել քաղաք՝ արթնություն անցկացնելու, եթե մի եկեղեցին հովանավորում է դա, մնացածները նույնիսկ չեն էլ մասնակցում: Կոմունիստները գալիս են քո վրա, Ամերիկա՛:

61 Որտե՞ղ է մեր Ուժը: Որտե՞ղ է մեր փառքը: Ի՞նչ է սա: Որովհետև մենք գնացել ենք մարդկային իմաստության հետևից, Աստծո զորության փոխարեն: Նրանք մեր քարոզիչներին այնպես ձևակարգապահ ու խստաբարո են դարձրել մինչև որ նրանք մեզ կազպակերպության վերածեցին այն աստիճան, որ մենք այնքան խստաբարո և գոռոզ ենք դարձել, որ մարդիկ...դու երբեք աղաղակ չես լսի եկեղեցում: Երբեք չեք լսի, որ ինչ-որ մեկը լաց լինի: Սգո նստարանը դրված է նկուղում: Եկեղեցում այլևս փառք չկա: Այն ամենը, ինչ մենք անում ենք՝ փայտացած նստում ենք հետևում: Մենք ազատ չենք: Մենք կապված ենք: Սատանան իր ժամանակակից դևերով կապել է կենդանի Աստծո եկեղեցին: Դա ճիշտ է: Եկեղեցում այլևս Զորություն չկա: Այլևս ազատություն չկա: Մարդիկ այնքան խստաբարո և կծկված են: Աստված կարող է անցնել հոգեգալստական մարդկանց միջով և ցույց տալ, որ Նա Աստված է, և ապացուցել Իր հարության նշանները, բայց դա նույնիսկ չի ցնցում նրանց: Փա՜ռք: Դա խայտառակություն է: Ես անցնում եմ ողջ երկրով, Աստված գործում է, նշաններ է կատարում, իսկ մարդիկ նստում են, և. «Դե, ենթադրում եմ, որ դա լավ է: Ո՛հ, ես գիտեմ, որ դա հնարավոր է անել»: Դա նրանց չի հուզում: Ինչո՞ւ: Նրանք կապված են Դալիլայով՝ աշխարհով: Նրանք կապանքների մեջ են:

62 Այժմ նրանք նրանց մեջ են քաշել, կապել են նրանց միության մեջ: «Սամփսո՛ն, փղշտացիները գալիս են քո վրա»: Ի՞նչ ես պատրաստվում անել:

63 «Ո՛հ, մենք մեծ հարանվանություններ ունենք»: Անկասկած: «Սա մեր երբևէ ունեցած ամենամեծ անդամությունն է»: Սակայն որտե՞ղ է Հոգին: Որտե՞ղ է Սուրբ Հոգին:

64 Ահա, թե ինչ արեց սատանան: Նա հմայեց եկեղեցին: Նա շարունակում է հմայել նրան. «Արի՛ ինձ մոտ, ես այստեղ մի մեծ խորան կտամ քեզ, եթե ընդամենը *սա*

անես: Եթե ազատվեք ձեր ունեցած այդ ֆանատիկ քարոզչից, և ընտրեք մի մարդու՝ առողջ դատողություն ունեցող աստվածաբաբության դոկտոր, ապա մենք հրաշալի մի մեծ դասական եկեղեցի կկառուցենք և մյուսների նման կլինենք»: Ամո՛թ ձեզ: Ավելի լավ է ունենալ մի մարդու, ով սրճի հատիկները լոբուց չի տարբերում, բայց լեցված է Սուրբ Հոգով և Աստծո զորությամբ, որ փոխզիջման չի գնում:

65 Բայց, ո՛հ, այնքան խստաբարո են դարձել, որ եթե մի խեղճ սուրբ հավաքույթի ընթացքում խախտի այդ լռությունը և խոսի լեզուներով, կամ մի փոքր աղաղակի, կամ ինչ-որ բան անի, մյուսները սագի նման շրջվում և նայում են: «Ի՞նչ էր դա: Ինչո՞ւ հանկարծ: Դա պետք է ինչ-որ տեղից ներս մտած ֆանատիկ լինի»: Դուք գիտեք, որ դա ճշմարտություն է: Ինչ-որ խեղճ մի սուրբ ներս է մտնում, այնքան ուրախ են, որ բարձրացնում են իրենց ձեռքերը, լացում և փառք են տալիս Տիրոջը, եթե ինչ-որ մեկը «ամեն» է ասում, երբ քարոզվում է Ավետարանը, մնացածները շրջվում են, որ տեսնեն, թե ով նման բան ասեց: Դա հոգեգալստականներն են: Ի՞նչ է պատահել: Դուք ընդօրինակում եք մեթոդականներին, մկրտականներին, նրանք ընօրինակել են կաթոլիկներին, կաթոլիկներն էլ ընդօրինակել են դժոխքին: Եվ բոլորը միասին ընդօրինակում են դժոխքին: Ճիշտ է:

66 Դալիլան քաշել է ձեզ մեծ եկեղեցիների մեջ, հրաշալի, բարձր դասի կրթված ծառայողներ են: «Դե, գիտես, *այսինչ-այնինչն* այստեղ միլիոնատեր է, եթե միայն կարողանաինք նրան մեր եկեղեցի բերել: Ո՛հ, Աստված իմ»: Եթե նա վերստին ծնված չէ՝ արժանի չէ այնտեղ լինելու: Ինձ չի հետաքրքրում, որ նա մի միլիոն դոլար ունի: Թե քառասուն Կադիլակ ունի, ինչ էլ որ ունենա, նա պետք է վերստին ծնվի, գա դեպի նոր ծնունդ, նորոգվի Սուրբ Հոգով և դուրս գա այնտեղից նոր ծնունդով, խնչելով (ներեցե՛ք), լացելով և աղաղակելով, իրեն պահելով մյուսների նման, և դրանից հետո ապրել մի կյանքով, որն ապացուցում է, որ նա ստացել է Դա: Ամեն: Ահա, թե ինչի կարիքը դուք ունեք:

67 «Սամփսո՛ն, փղշտացիները գալիս են քո վրա»: Կոմունիստները գալիս են քո վրա: Աշխարհը գալիս է քո վրա: Սատանան գալիս է քո վրա:

68 Նրանք գալիս և տեսնում են, որ Աստծո Հոգին հրաշքներ է անում և Իր հարության գործերն է

կատարում, ինչ Հիսուսն է խոստացել, ասում են. «Գիտեք, ես կարծում եմ, որ եղբայր Բրանհամի մոտ մտային հեռազգացություն է: Իմ հովիվն ասել է, որ դա սատանայից է»:

69 Դուք՝ խղճուկ, կեղծավոր, խաբված անհավատարիմներ եք, բոլորը փայլեցրած են, դուք ոչխարի հանդերձներով գայլեր եք: Հիսուսն ասաց. «Եթե Ինձ ճանաչեիք, Իմ օրն էլ կճանաչեիք»: Բայց դուք Սավուղների խումբ եք հավաքել, ովքեր փորձում են աշխարհի նման դարձնել ձեզ:

70 Մենք Աստծո այրերի խումբ ենք ուզում, ովքեր փոխզիջման չեն գնում Խոսքի հետ, այլ քարոզում են Ճշմարտությունը և կանգնում են Սուրբ Հոգու մկրտության վրա:

71 Բայց ի՞նչ արեց աշխարհը: Սափրեց ձեր ողջ Ուժը: Դուք ծնված նազովրեցի, հոգեգալստական էիք, բայց աշխարհը, իհարկե, սափրեց ձեր Ուժը: Այժմ նույնքան խստաբարո եք, որքան մյուսները:

72 Ի՞նչ ենք մենք անելու: Ի՞նչ է կատարվելու: Մի փառավոր բան կա, որով մտածում եմ ավատրել այս թեման:

73 Մինչ Սամփսոնը կապված էր: Մենք արթնություն չենք կարող ունենալ: Լսե՛ք մեր հավատարիմ եղբայր Բիլլի Գրեհեմին՝ «Արթնություն մեր օրում»: Լսե՛ք Օրալ Ռոբերտսի աղաղակը՝ «Արթնություն մեր օրերում»: Լսե՛ք մյուսներին՝ «Արթնություն մեր օրերում»: Մենք ինչպե՞ս կարող ենք արթնություն ունենալ, երբ կապված ենք: Մենք մեր կազմակերպություններով ու ավանդույթներով կապել ենք Սուրբ Հոգուն, և մենք Սուրբ Հոգու արթնություն չենք կարող ունենալ: Ամեն: Գիտեմ՝ դա կիզիչ շոգ է, այդպիսի եղանակ, բայց դա Ճշմարտություն է: Մենք ինչպե՞ս կարող ենք Սուրբ Հոգու արթնություն ունենալ, երբ այսպես կապված ու ծիսակարգապահ ենք: «Աստվածապաշտության կերպարանքը» նրանք կունենան, ասում է Աստվածաշունչը: «Աստվածապաշտության կերպարանքը կունենան, բայց դրանում եղող Զորությունը կուրանան»: Ինչի՞ զորությունը: Կազմակերպությա՞ն զորությունը: Աշխարհի՞ զորությունը: Եկեղեցո՞ւ զորությունը: Սուրբ Հոգու զորությունը: Դրանում է եկեղեցու գաղտնիքը: Իսկ երբ եկեցեղին հավանություն է տալիս կրթված քարոզիչներին, մեծ շենքերին և զարդարանքին, հնաոճ

Սուրբ Հոգու փոխարեն, ավելի լավ է նրանք նորից գնային հասարակ աղոթքատն: Ամեն: Ճիշտ է: Դուք ինչպե՞ս ենք պատրաստվում Սուրբ Հոգու արթնություն ունենալ, երբ մարդիկ հանգցնում ու կապում են Այն և վախենում են Դրանից: Ահա, թե ինչում է խնդիրը:

74 «Փղշտացիները գալիս են քո վրա»: Բայց մենք օրհնյալ մի հույս ունենք, մինչ Սամփսոնը բանտում էր...

75 Ո՞րն էր առաջին բանը, որ նրանք արեցին, երբ բռնեցին նրան: Կապեցին: Խլեցին նրա ուժը, նրանք գտել էին նրա գաղտնիքը: Նրանք գտել են ձեր գաղտնիքը: Աշխարհը գտել է ձեր գաղտնիքը: Այժմ դուք՝ կանայք, բոլորդ կարճ մազերով, դա աշխահի նման է: Դուք, տղամարդիկ գնում և վարվում եք աշխարհի նման: Իհարկե, պատմում եք կատակներ, անպարկեշտ կատարներ, դուրս եք գալիս մի քանի սիգարետ եք ծխում, հարևանի կանանց հետևից եք վազում և էլի նման բաներ, մասնակցում եք երեկույթներին, որ չկորցնեք ձեր աշխատանքը: Ես կնախընտրեի փորիս վրա պառկել և չորահաց ուտել, առվակից ջուր խմել և մաքուր ու անարատ մնալ Աստծո առջև, քան փոխզիջման գնալ ցանկացած տեսակի աշխատանքի պատճառով: Դա ճիշտ է: Ճիշտ է: Աստծուն հավատարիմ մնացե՛ք:

76 «Սամփսո՛ն, փղշտացիները գալիս են քո վրա»: Բրանհամի՛ խորան, աշխարհը սողոսկում է ձեր մեջ: Ի՞նչ կասեք սրա մասին: Արդյոք դուք հայտնե՞լ եք ձեր գաղտնիքը: Արդյոք հայտնե՞լ եք այն գաղտնիքը, որ Աստված տվեց ձեզ, երբ մի քանի տարի առաջ արցունքներն աչքերին զղջացիք այնտեղ: Արդյո՞ք դուք թույլ եք տվել, որ հասարակական, ֆորմալ երկրպագությունը ներս սողոսկի: Ի՞նչ է ձեզ պատահել: Աստված կարող է իջնել և հրաշք անել, անցնել լսարանի միջով և պատմել մարդկանց նրանց սրտի գաղտնիքները և այլն, բժշկել հիվանդներին և տառապանքի մեջ եղողներին, հրաշքներ ու նշաններ կատարել, և Սուրբ Հոգով քարոզել Իր Խոսքը որքան հնարավոր է, իսկ մարդիկ ասում են. «Դե, ես կարծում եմ՝ դա լավ է: Մենք հաճույք ենք ստանում այն մեկ-մեկ լսելուց, եթե շատ հոգնած չենք լինում»: Դա Բրանհամի խորանն է: Փղշտացիները գալիս են քո վրա:

77 Երբ, մի ժամանակ երբ Խոսքի քարոզչության ժամանակ տարեց սուրբերը արցունքներն աչքերին կանգնում և քայլում էին՝ հեկեկալով, գուցե մի խոսք չէին

ասում, պարզապես երկու թե երեք անգամ քայլում էին շուրջը և նստում էին, այնքան լցված էին Սուրբ Հոգով: Խոսքը կերակրում էր նրանց: «Մարդ ոչ միայն հացով կապրի, այլ ամեն Խոսքով, որ դուրս է գալիս Աստծո բերանից»: Բրանհամի՛ խորան, փոշտացիները գալիս են քո վրա:

Հոգեգալստականնե՛ր, փոշտացիները գալիս են ձեր վրա:

78 Իհարկե, փոշտացիները վաղուց են եկել են ձեր՝ մնացածների վրա, երբ դուք այնպես ամուր կազմակերպվեցիք, ոչինչ ներս մտնել չի կարող, եթե չլինես երիցական, մկրտական, մեթոդական, կաթոլիկ կամ էլի ինչ-որ մեկը: Մնացածների հետ դուք չեք ուզում որևէ կապ ունենալ:

79 Եվ այսպես, արթնություն մեր օրերո՞ւմ: Ինչպե՞ս մենք կարող ենք արթնություն ունենալ, երբ կանոնավոր արթնություն տվողը կապված է այս աշխահի կողմից: Աստված չի մտնի, այնտեղ, որտեղ աշխարհն է, համոզված եղեք: Դուք շփվում եք աշխարհի հետ, ուրեմն դա, դա վերջն է: Երբ թույլ եք տալիս, որ աշխարհը ներս սողոսկի և սկսում եք վարվել աշխարհի նման, այդժամ ձեզ հետ ամեն ինչ վերջացած է: Բայց երբ դուք այս աշխարհի յուրաքանչյուր կապանքը դեն նետեք, և գաք Աստծուն, Աստված կօգտագործի ձեզ, մինչև նորից չգնաք սիրախաղ անելու:

80 Ահա միակ հույսը, որ ես ունեմ այս առավոտ, ավարտելով իմ Պատգամը, սա է՝ «Մինչ Սամփսոնը կապված էր, մազերի մի նոր խուրձ աճեց»:

81 Ո՛վ Աստված, ուղարկիր մեզ մեկ այլ եկեղեցի վերջին ժամանակներից առաջ, որպեսզի Սուրբ Հոգու զորությունը կարողանա մտնել նրա մեջ՝ Հոգու դրսևորումներով, և Մարկոսի Ավետարանի 16-րդ գլուխը կարողանա հետևել Եկեղեցուն, Գործք 2.4, Գործք 2.38, այս ամենն անընդհատ հետևելու է Եկեղեցուն: Նշաններն ու հրաշքներն ուղեկցում են առաքյալներին: Նրա հարության հզոր նշանները ուղեկցում են նրանց: Մինչ մենք բանտում ենք գտնվում, Աստված, ինչ-որ տեղ, անկասկած, բերք է աճեցնում՝ վերջնական մեծ կոտորածի համար: Գուցե դա դու ես իմ քրիստոնյա բարեկամ այստեղ այս առավոտ, գուցե այդ քո ուժն է, որ սկսել է աճել: Ես աղոթում եմ, որ այս Պատգամն այստեղ և ամեն տեղ, ուր որ այն գնա, հավատում եմ, որ

Այն կօգնի ձեզ վիտամիններ տալ ձեր օրգանիզմին որը կրկին աճեցնելու է հոգևոր Զորությունը ձեր կյանքում:

Խոնարհենք մեր գլուխները և աղոթենք:

82 Ո՛հ, Տե՛ր Աստված, երկնքի և երկրի Արարիչ, հավիտենական կյանքի Հեղինակ, և հոգևոր պարգևի և ամեն բարիքի Շնորհող, վեցրու այս խոսքերը այսօր և դիր դրանք սրտի մեջ ու ջրիր դրանք, Տեր: Թող մարդիկ աղոթեն այս բաների վերաբերյալ՝ տեսնելով, որ աշխարհը հմայել է եկեղեցին և, վերջապես, գտել է նրա Ուժը, գտել է նրա գաղտնի տեղը, գտել է, թե ինչում է նրա գաղտնիքը, և սափրել է այն: Գերել է այն մարդկանց, ովքեր մի ժամանակ հաղթանակ էին աղաղակում, մի ժամանակ հաղթանակ ունեին և այնպես է սափրել նրանց, որ չորեքշաբթի երեկոյան մնում են տանը՝ հեռուստահաղորդում դիտելու համար: Իրենց սրտերից վեր է առել ուրախությունը, և փոխարենը ավելի շատ սեր է տվել աշխարհի հանդեպ, քան նրանք ունեն Աստծո նկատմամբ: Նրանց տվել է ավելի շատ աշխարհ՝ աշխարհիկի, ավելի շատ ցանկություն աշխարհիկ զվարջությունների համար, քան Ավետարանը քարոզելու: Եթե չկա մեծ երաժշտական խումբ և այն հրապուրիչ աղաղակները, ապա նրանք այլևս չեն ուզում հին Ավետարանը, որը հոգուն ուրախության արցունքներ է բերում, որը ետ է բերում աստվածային բժշկությունը, որը վերականգնեցնում է եկեղեցում առաքելական պարգևները, որը բերում է հարություն առած Քրիստոսին՝ այս օրվա Մեսիային:

83 Բայց քանի որ Իսրայելը կապված էր իրենց թագավորների կողմից, նրանք չէին կարողանում հետևել իսկական Թագավորին. և երբ Նա՝ իսկական Թագավորը եկավ, նրանք Նրան չճանաչեցին: Նույնն էլ այսօր է: Ո՛վ Տեր, Փառքի Թագավորը հայտնվել է Սուրբ Հոգու տեսքով, և, Տե՛ր, նրանք այդ չգիտեն: Նրանք չեն ճանաչում դա: Նրանք այնքան ամուր կապված են կազմակերպությունով, որ դա չեն հասկանում, որովհետև դա նրանց կազմակերպության մեջ չէ: Տե՛ր, սա սատանայի գործն է, որ նա արել է մարդկանց հետ:

84 Թող Աստվածային Սամփսոնը, թող սրտով անկեղծները՝ նրանք, ովքեր փափագում, լացում, աղաչում և դիմանում են, թող մնան դրա հետ, Տե՛ր, մինչև այս նոր ցանքն աճի, մինչև ուրախությունը Սիոնում նորից հայտնվի, և այնտեղ դուրս գա մի խումբ, որը

կկարողանա ճանաչել և հասկանալ, որը կկարողանա տեսնել Մեսիային և թաքնված Զորությունը, որ պահված է աշխարհից, որը նրանք հիմա չեն հասկանա: Ծնորհի՛ր, Տե՛ր, որ տեսնեն սա: Որովհետև մենք այդ խնդրում ենք Հիսուսի Անունով: Ամեն:

[Չձայնագրված հատված ձայներիզի վրա:
Ծան. Խմբ.]:
...զորությունը հիմա,
Ո՛վ Տեր, ուղարկիր զորությունը հիմա,
Եվ մկրտիր ամեն մեկին:

Նրանք վերնատանն էին,
Բոլորը միաբան,
Երբ Սուրբ Հոգին իջավ
Խոստացված մեր Տիրոջ կողմից:

Ո՛վ Տեր, ուղարկիր Քո զորությունը հիմա,
Ո՛վ Տեր, ուղարկիր Քո զրությունը հիմա,
Ո՛վ Տեր, ուղարկիր զորությունը հիմա,
Եվ մկրտիր ամեն մեկին:

85 Ինչպե՞ս եմ ես սիրում Նրան: Ուղարկի՛ր Նրա զորությունը: Նրանք վերնատանն էին, միաբան: Ամբողջ աշխարը հեռացել էր նրանցից: Նրանք դատարկված էին, և Սուրբ Հոգին եկավ:

86 Այսօր նրանք ասում են. «Արի՛, միացի՛ր եկեղեցուն, գրանցի՛ր քո անունը գրքում: Կամ ծնկի եկ և ասա. «Ես դավանում եմ Քրիստոսին որպես Աստծո Որդի», վեր կաց»: Սատանան նույն բանն է անում: Անկասկած: Սատանան մկրտվեց, երբ մկրտվեց Հուդան: Նա գնաց և Ավետարանը քարոզեց, երբ Հուդան գնաց և Ավետարանը քարոզեց: Բայց սատանան չստացավ Սուրբ Հոգին: Ահա թե ինչ: Ահա թե որտեղ է թաքնված Զորությունը, այդ հարությունը, երբ հաստատ գիտես, առանց կասկածի ստվերի: Ամեն:

87 Նա այստեղ է: Այդ նույն Սուրբ Հոգին, որ Մեսիայի վրա էր, դեռ Իր Եկեղեցու վրա է: Նա երբեք չի հեռանում: «Ես միշտ ձեզ հետ կլինեմ, ձեր մեջ, մինչև աշխարհի վերջը: Ես այնտեղ կլինեմ: Գործերը, որոնք Ես անում եմ, դուք էլ կանեք: Դրանցից էլ ավելի շատ գործեր կանեք, որովհետև Ես Իմ Հոր մոտ եմ գնում»:

88 Բայց աշխարհը փոխզիջման է գնում դրա հետ՝ «Ո՛հ, դա անցյալում էր»: Դա հենց այն է, ինչ սատանան ուզում է, որ դուք անեք: Նրանք ուզում են ձեզ գերել: Աստված

ուզում է ձեզ մկրտել; Աստված ուզում է ձեզ…Դուք ասում եք. «Ո՛հ, ես չեմ հավատում, որ այդ ամենն այնտեղ այնքան էլ վատ է»: Ծարունակիր ապրել, շարունակիր ապրել քո մեղքի մեջ, ապրիր քո մեղքիդ մեջ: Բայց մինչև դու չփտես, մինչև դու չփտես քո սեփական գաղափարների, չփտես քո սեփական վարքագծի համար, և նորից չնորոգվես և վերածնվես, և այդ նոր Կյանքը լիովին տարբերվելու է այն կյանքից, որ հեռացավ:

89 Ցորենի հատիկը իջնում է դեղին, բարձրանում է կանաչ: Իջնում է պինդ, պատյանով, բարձրանում է փափուկ և քամու հետ շարժվում է: Ո՛հ, փառք: Ալելո՛ւիա: Երբ քամին սկսում է փչել, հատիկը ոչինչ չի կարող անել շարժվելուց և տեղափոխվելուց բացի, բայց փոքրիկ, փոքրիկ շյուղը ծովում և ուրախանում է, հետո աճում, ուժեղանում է: Այն երբեք շյուղ չի կարող դառնալ, մինչև հատիկը չմեռնի և չփտի: Ոչ միայն մեռնի, այլև փտի: Այլևս չի կարող հետ գալ, բայց կյանքը դուրս է գալիս իրենից:

90 Ինչպես քիչ առաջ ասացի, ծնունդը սարսափելի, կեղտոտ, բավականին կեղտոտ բան է, բայց հենց այնտեղ է կյանքը գտնվում: Երբ դու քեզ կեղտոտ ես համարում, քո մեթոդական, մկրտական և հոգեգալստական հավատամքները կեղտոտ ես համարում և զոհասեղանի մոտ մեռնում ես, այդժամ նոր Կյանքը ներս է մտնում: Սուրբ Հոգին բարձրացնում է քեզ դրանից վեր. դու տեսնում ես Աստծուն:

91 Փառավոր մի օր մենք կտեսնենք Նրան: Մի օր մահվան գծից այն կողմ մենք կտեսնենք Նրան: Դուք հավատո՞ւմ եք դրան: Մի օր մահվան գծից այն կողմ ուրախ ապագա է ինձ սպասում այնտեղ:

92 Անցած երեկո կանգնած էի այստեղ՝ անկյունում, և ես հիշեցի ծեր Ռաբբի Լոուսանին: Երբ նա այստեղ էր լինում՝ իր հին ձեռնափայտը մեկնելով բռնում էր վզիցս և քաշում էր ինձ դեպ իրեն այստեղ՝ ամբիոնի մոտ և երգում էր այդ երգը՝ «Այնտեղ ինձ սպասում է…»: [Չձայնագրված հատված ձայներիզի վրա: Ծան. Խմբ.]…?…

93 Ինչ–որ բան կատարվեց: Դա հեռացրեց աշխարհը: Ես սկսեցի ամեն ինչին այլ կերպ նայել: Ես այնքան էի մտահոգված նրանով, թե ամերիկացի ժողովուրդը շարունակ, տարեցտարի ինչպես է վարվում, տեսնելով կանանց և տղամարդկանց, թե ինչպես են բարոյալքում իրենց և ընկնում մեղքի մեջ, մինչև որ դա ինձ երկու թե երեք անգամ գրեթե ուժասպառ արեց: Երեկ ես

ասացի Աստծուն. «Ես այլևս չեմ մտահոգվելու: Քո Խոսքն է ասում, որ այդպես է լինելու: Բայց ես կկանգնեմ խրամատում և իմ ողջ էությամբ կաղաղակեմ դրա դեմ»:

94 Մի անգամ Կանաչ Ձրաղածի՝ իմ քարայրի մոտ կանգնած, այնտեղ ամայի վայրում, ամբողջ օրը աղոթում էի: Եվ ժամը երեքի կողմերը արևը մայր էր մտնում, իսկ ես քարայրից դուրս էի եկել, կանգնել էի մի մեծ ժայռի վրա և նայում էի հեռուն: Կանգնել էի այնտեղ և նայում էի Արևելքի ուղղությանբ՝ փառաբանելով Տիրոջը: Եվ տեսնում էի, թե ինչպես է արևը լեռան գագաթից իջնում ծառերի հետևով, երբ կիրճի միջով նայում էի մյուս լեռներին, սաղարթախիտ էր. շուրջ բոլորը լռություն էր: Եվ ես ասացի. «Տե՛ր, մի օր Դու թաքցրեցիր Մովսեսին ժայռի խոռոչում և անցար նրա կողքով, որովհետև նա հոգնած էր: Բայց Դու կողքով անցար, և նա ասաց՝ «մեջքը մարդու մեջքի նման էր»: Ես ասացի. «Թաքցրո՛ւ ինձ ժայռի խոռոչում, Տե՛ր»: Մոտավորապես այդ ժամանակ իմ կողքով թեթև Քամի անցավ՝ իջնելով կիրճի միջով: Այն շարժվեց ուղիղ ներքև իմ կողքով, Քամին իջավ ներքև, իջավ անտառի միջով: Ես կանգնած էի այնտեղ:

Մի օր, միայն Աստված գիտի, թե որտեղ և երբ,
Մահկանացու կյանքի բոլոր անիվները կկանգնեն,
Այդ ժամանակ ես կգնամ Սիոնի վրա ապրելու:

Մի օր մահկանացու գծից այն կողմ,
Մի օր, միայն Աստված գիտի, թե որտեղ և երբ:

Ի՞նչ է կատարվելու: Ողջ այս հորձանքը կկանգնի:

Մահկանացու կյանքի բոլոր անիվները կկանգնեն,
Այդ ժամանակ ես կգնամ Սիոնի վրա ապրելու:

Իջել է քաղցր կառքը,
Եկել է, որ ինձ Տուն տանի,
Իջել է քաղցր կառքը,
Եկել է, որ ինձ Տուն տանի,

Եթե դու ինձանից առաջ հասնես այնտեղ,
Եկել է, որ ինձ Տուն տանի,

Ասա՛ եղբայր Բոսվորդին, և բոլոր իմ ընկերներին,
Եկել է, որ ինձ Տուն տանի,

Հիմա իջել է...(Մի օր նա կիջնի և կհափշտակի ինձ)...կառքը,
(Ամեն ծառ բոնկվելու է կրակով. Աստծո Հրեշտակը, հրեղեն կառքը)...որ ինձ Տուն տանի:
Իջել է քաղծր կառքը,
Եկել է, որ ինձ Տուն տանի:

95 Օրերից մի օր, օրերից մի օր մահվան վերջին ժամին ես կսպասեմ Նրա գալստյան: Դա ճիշտ է:

Ես նայեցի Հորդանանին և տեսա,
Եկել է, որ ինձ Տուն տանի, (Ծեր Եղիայի նման, որ նայեց Հորդանանին):
Փայլող հրեշտակների մի խումբ գալիս է իմ հետևից,
Նրանք եկել են, որ ինձ Տուն տանեն:

Իջել է, իջել է քաղծր կառքը,
Եկել է, որ ինձ Տուն տանի,
Իջել է քաղծր կառքը,
Եկել է, որ ինձ Տուն տանի:

96 Տեր Հիսուսը՝ այս կառքի օրհնյալ Կառապանը, Սիոնի հին նավի՝ Կյանքի նավի Նավավարը, որ իջնում է այս շենքի միջով, խոսում է, Նրա ներկայությունն այստեղ է: Այն Սուրբ Հոգին, որ Նրան գերեզմանից հարուցանել է, այստեղ է:

97 Քանի որ նրանք աղոթքի թերթիկներ չեն բաժանվել, կա՞ այստեղ որևէ մեկը, ով այս քաղաքից չէ, ում ես չեմ ճանաչում, բայց նա այստեղ է, որ աղոթեն իր համար: Բարձրացրե՛ք ձեր ձեռքերը, ում ես չեմ ճանաչում: Բարձրացրե՛ք ձեր ձեռքերը, ես չգիտեմ: Դուք, դուք, որ այնտեղ եք: Կարծում եմ բեղերով տղան է այնտեղ՝ խորքում, ինչ–որ մեկը բարձրացրեց իր ձեռքը այնտեղ՝ այդ կողմում: Այո՛, դուք, դո՞ւք բարձրացրիք ձեր ձեռքը: Լավ: Այնտեղ՝ հետևում, դո՛ւք եք, պարոն: Լավ: Դուք բոլորդ ինձ անծանոթ եք, ճի՞շտ է: Դա Տեր Հիսուսն է, այս հոտի նույն Հովիվն այստեղ է, հավատո՞ւմ եք, որ Իր խոստումները ճշմարիտ են: Նա օծում է Իր եկեղեցին և՝ «Գործերը, որոնք Ես անում եմ, դուք էլ կանեք, և դրանցից

ավելի մեծ գործեր պիտի անեք, որովհետև Ես Իմ Հոր մոտ եմ գնում: Դրանցից ավելի»: Հավատո՞ւմ եք դրան:

98 Դուք ձեր ձեռքը բարձրացրե՞լ եք ի նշան, որ չեք ճանաչում ինձ: Դուք հավատո՞ւմ եք, որ Աստված կարող է ինձ հայտնել, թե ինչ կա ձեր սրտում, կարող է ինձ ասել, ինչպես Նա ասեց այն կնոջը, ով դիպավ Նրա հանդերձին: Հավատո՞ւմ եք, որ Նա է Քահանայապետը, ում կարող ենք դիպչել մեր տկարությունների զգացումով: Եթե Աստված ինձ հայտնի ձեր վիճակը, կհավատա՞ք, որ ես Նրա մարգարեն եմ, հավատո՞ւմ եք, որ Նրա ներկայությունը այստեղ է և դրա համար է Նա սա թույլ տալիս: Դուք աղոթում եք ձեր կնոջ համար: Նրա ազդրը խախտված է, հոդախախտված է: Դա ճիշտ է: Եթե դա ճիշտ է, կանգնեք: Լավ, գնացեք և գտեք նրան առողջ: Ամեն:

99 Ի՞նչ կասեք դուք՝ բեղերով երիտասարդ, որ կանգնել եք այնտեղ՝ խորքում: Հավատո՞ւմ եք ձեր ողջ սրտով: Հավատո՞ւմ եք, որ Աստված կարող է ինձ ասել, թե ինչում են ձեր խնդիրը: Հավատո՞ւմ եք, որ ձեր որդին առողջանալու է: Հավատո՞ւմ եք: Տղայի՝ նրա մոտ գանգուղեղային կաթված է: Դա ճիշտ է: Դուք չ...Դուք Քենթուքիից եք: Եթե դա ճիշտ է, բարձրացրե՛ք ձեր ձեռքը: Ես ձեզ չեմ ճանաչում, այդպե՞ս չէ: Եթե ես...*Այսպես* բարձրացրե՛ք ձեր ձեռքերը, մենք իրար չենք ճանաչում: Դա ճիշտ է: Վստահե՛ք Աստծուն: Հավատո՞ւմ եք: Քանի որ դուք հավատում եք, կգտնեք ձեր որդուն այնպես, ինչպես հավատում եք: Պարզապես ընդունե՛ք դա ձեր սրտում:

100 Ո՞վ էր այնտեղ, որ բարձրացրեց իր ձեռքերը, ում ես չեմ, չեմ.... Այդ դո՞ւք էիք: Ծատ լավ, պարոն, դուք հավատո՞ւմ եք, որ ես Աստծո ծառան եմ: [Տղամարդն ասում է. «Ամեն». Ծան. Խմբ.]: Հավատո՞ւմ եք ձեր ողջ սրտով: Կարիք չկա, որ բարձրանաք այստեղ, պարզապես կանգնեք այնտեղ: Լավ, պարոն, խնդիրը նրանում է, դուք տառապում եք շաքարային դիաբետով: Եվ դա անհանգստացնում է ձեր ոտքը: Դուք Օհայոից եք: Ձեր անունը պարոն Միլլեր է: Վերադարձե՛ք տուն և առողջացեք: Ամեն ինչ կարգին է, հավատացե՛ք ձեր ամբողջ սրտով: Ամեն ինչ կարգին է:

Դուք հավատո՞ւմ եք...? Հավատացե՛ք դրան: Եթե կարող եք հավատալ:

101 Տիկինը, որ նստած է այստեղ, դո՞ւք էիք բարձրացրել ձեր ձեռքը: Խոշոր, ակնոցավոր տիկին, հավատո՞ւմ եք ձեր ողջ սրտով: Հավատո՞ւմ եք...Հավատո՞ւմ եք, որ ես

Աստծո ծառան եմ: Հավատո՞ւմ եք: Լավ, եթե Աստված ինձ ասի, թե ինչ խնդիր ունեք, կհավատա՞ք: Սրտի խնդիր է: Լավ, բարձրացրե՛ք ձեր ձեռքը, եթե դա ճիշտ է: Շատ լավ:

102 Տիկինը, որ նստած է ձեր կողքին, կանգնել է: Միրտն է. բայց իրականում ձեր աչքերն են: Ես նրան ճանաչում եմ: Շատ լավ, եթե կարող եք հավատալ:

103 Այնտեղ՝ խորքում, մյուս տղամարդու մոտ այնտեղ հետևում նույնպես սրտի խնդիր է և մաշկային հիվանդություն: Հավատո՞ւմ եք, որ Աստված ձեզ կբժշկի: Հավատո՞ւմ եք, պարո՛ն:

104 Այնտեղ՝ խորքում, ինչ-որ տեղ մի տղամարդ էր բարձրացրել իր ձեռքերը, որ չ...պարոն Շուբերտն է: Լավ, պարոն: Շատ լավ, դուք հավատո՞ւմ եք: Դա նույնպես կապված է ձեր աչքերի հետ, այդպես չէ՞: Դուք նաև աղոթում եք այնտեղ նստած ձեր մոր համար: Եթե դա ճիշտ է, բարձրացրե՛ք ձեր ձեռքը: Մենք իրար անծանոթ ենք: Ճի՞շտ է դա: Ձեռքը սեղմեք՝ միմյանց ձեռք սեղմեք: Լավ, դա ճիշտ է: Եթե կարող եք հավատալ, կարող եք ստանալ:

105 Հարություն առաց Քրիստոսն այս շենքում է: Նա նույնն է: Ի՞նչ է դա անում ձեզ համար: Դուք թույլ եք տվել, որ աշխարհը խլի ձեր ողջ ուժը: Փա՜ռք: Ես նոր ծնունդ եմ ուզում: Ես նոր Կյանք եմ ուզում: Ինձ չի հետաքրքրում, թե ինչ աստիճանի կհասնի Դա, արդյոք ես «սուրբ թռչկոտող» կլինեմ այլ բան: Ինձ չի հետաքրքրում, թե ինչ աստիճանի կհասնի Դա, ես ուզում եմ իսկական Սուրբ Հոգի, ինչպիսին որ հիմա ինձ վրա է: Ես ուզում եմ պահպանել Նրան: Ես կնախընտրեի Նրան ունենալ, քան աշխարհի բոլոր բաները: Ամե՛ն: Դուք հավատո՞ւմ եք: Հավատո՞ւմ եք, որ Նա այստեղ է:

106 Որեմն միմյանց վրա ձեռք դրեք: Ասացե՛ք ինձ, էլ ինչ կարող էր Նա անել: Ոչինչ: Հավատք ունեցեք հիմա: Հավատացե՛ք, որ դա վերջացած է:

107 Տե՛ր Աստված, երկնքի և երկրի Արարիչ, հավիտենական կյանքի Հեղինակ և բոլոր բարի պարգևների Շնորհող, Քո Հոգին այնպիսի օծությամբ է այստեղ, Տե՛ր, որ թվում է, թե շենքը շնչում է, հետ ու առաջ է գնում: Ինչո՞ւ մարդիկ չեն կարող հասկանալ այդ, Տե՛ր: Արդյո՞ք նրանք, արդյո՞ք նրանք այն աստիճանի կապված են աշխարհի հետ և այնպես սառը, ֆորմալ և խստաբարո են դարձել, որ էլ չեն կարող Քեզ ճանաչել: Տե՛ր Աստված,

թող այս Զորությունը հարվածի յուրաքանչյուրին, և ամեն հիվանդ առողջանա, ամեն մեղավոր փրկվի և Աստված փառավորվի: Ես դա խնդրում եմ Հիսուս Քրիստոսի՝ Աստծո Որդու միջոցով: Ամեն:

108 Դուք հավատո՞ւմ եք դրան: Բարձրացրե՛ք ձեր ձեռքերը: Ընդունո՞ւմ եք ձեր բժշկությունը: Աստված օրհնի ձեզ: Այժմ գնացեք և գտեք դա այնպես, ինչպես հավատում եք, դա կլինի այդպես: Ես տեսիլքներ եմ տեսնում ուրիշների վրա: Դա ճիշտ է: Ես այս երեկո պիտի վերադառնամ:

109 Եթե դուք հիմա չեք հավատում, երբեք էլ չեք հավատալու: Դա ճիշտ է: Մի անգամ Հիսուսը դա արեց, և նրանք ասացին. «Դու...Մենք գիտենք, որ երբ Մեսիան գա, մեզ կհայտնի այս բաները»: Կինն ասաց. «Ես գիտեմ, որ Մեսիան կանի դա: Բայց ո՞վ ես Դու»:

Նա ասաց. «Ես Նա եմ»:

110 Այդժամ նա վազեց քաղաք և ասաց. «Եկե՛ք տեսեք մի Մարդու, Ով գիտի, թե ով եմ ես և ինչ եմ արել: Արդյոք սա Մեսիան չի՞»:

111 Նա ասաց. «Այս բաները վերջին օրերում նորից կձևավորվեն: Եկեղեցին կքարոզի Ճշմարտությունը, կկանգնի Խոսքի վրա: Կկատարի Աստծո բոլոր պատվիրանները: Նա չի շփվելու աշխարհի հետ: Եվ այնտեղ Ես կգործեմ և նույն բաները կանեմ»:

112 Բայց Նա ասաց. «Նրանք կլինեն հանդուգն, գոռոզ, ավելի հաճոյասեր, քան թե աստվածասեր, անհաշտ, բանսարկու, աստվածապաշտության կերպարանքն ունենալով», շատ կրոնասեր, եկեղեցիներ հաճախող: «Աստվածապածտության կերպարանքն ունենալով, բայց դրանում եղող զորությունն ուրանալով: Այդպիսիներից ե՛տ քաշվիր»:

113 Դո՛ւք մարդիկ, որտեղ էլ որ էիք եկեղեցում, որ Նա կանչեց ձեզ հիմա, տեսիլքը հեռացավ ինձանից: Եթե, եթե այն, ինչ ես ասացի, ճշմարտություն էր, իսկ ես չգիտեի դա ձեր մասին, բարձրացրե՛ք ձեր ձեռքերը, ով էլ որ լինի դա: Ողջ եկեղեցով, ամեն, ամեն մարդ: Շատ լավ: Տեսնո՞ւմ եք: Չեմ ճանաչում նրանց, երբեք չեմ տեսել նրանց, բայց Սուրբ Հոգին այստեղ է և Նա ճանաչում է իրենց: Մի՞թե չեք տեսնում, որ դա ես չեմ:

114 Լսե՛ք: Եթե Նա վստահել է դա ինձ, ապա Նա ինձ կվստահի նաև Խոսքի Ճշմարտությունը, որովհետև

Ճշմարտությունը կարող է գալ միայն Խոսքի միջոցով: «Ապաշխարեցե՛ք, ամեն մեկը, և մկրտվեցեք՝ Հիսուս Քրիստոսի Անունով՝ մեղքերի թողության համար, և Սուրբ Հոգու պարգևը կստանաք: Որովհետև խոստումը ձեզ է ուղղված և ձեր որդիներին, նրանց, որ հեռուներից են, որոնց մեր Տեր Աստվածը կկանչի»: Դուք հավատո՞ւմ եք դրան: Ընդամենը մի րոպեից մկրտության ծառայություն է լինելու:

115 Խոնարհենք մեր գլուխները: Կխնդրեի հովվին, որ աղոթի, մինչ նրանք պատրաստվում են մկրտության: Կարծում եմ հիմա մկրտության ծառայությունն է լինելու: Լավ: 🕊

59-0628M ԱՇԽԱՐՀԻ ԿՈՂՄԻՑ ԽԱԲՎԱԾ ԵԿԵՂԵՑԻ
Բրանհամի Խորան
Ջեֆերսոնվիլ, Ինդիանա ԱՄՆ

ARMENIAN

©2024 VGR, ALL RIGHTS RESERVED

Voice Of God Recordings
P.O. Box 950, Jeffersonville, Indiana 47131 U.S.A.
www.branham.org

Հեղինակային Իրավունքի Ծանուցում

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս գրքույկը կարող է տպվել տան տպիչի վրա անձնական օգտագործման համար կամ անվճար տրվել՝ որպես գործիք Հիսուս Քրիստոսի Ավետարանը տարածելու համար: Այս գրքույկը չի թույլատրվում վաճառել, պատճենահանել մեծ քանակությամբ, տեղադրել սոց. կայքերում, պահել ԷՀՄ-ում, թարգմանել այլ լեզուներով կամ օգտագործել դրամահավաքի համար առանց Voice Of God Recordings-ի գրավոր թույլտվության:

Հավելյալ տեղեկություն կամ այլ հասանելի նյութեր ձեռք բերելու համար խնդրում ենք կապ հաստատել հետևյալ հասցեով՝

VOICE OF GOD RECORDINGS
P.O. BOX 950, JEFFERSONVILLE, INDIANA 47131 U.S.A.
www.branham.org